

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՍԵՍԵՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆԵՕԼԴԷԶԷ.

(Շարունակութիւն եւ վերջ) *

Արդ գահի վրայ բարձրացրին մի կին, Բորան անունով, Խոսրով Բ-ի դուստրը, Ինչպէս երևում է սա կնքեց վերջապէս Հերակլի հետ խաղաղութեան դաշն ձևական կերպով, Այս գաշինքի պայմաններն անգամ ծանօթ չեն մեզ, Հաւանօրէն Մօրիկի խաղաղութեան դաշն պարզապէս հաստատուեցաւ, Թամնայն գէպս Մծրինը մնաց պարսից ձեռքը:

Բորանը կառավարեց մօտաւորապէս մինչև 631 թուի աշունքը: Նրան յաջորդեց Տիգրանում, հաւանօրէն մի Պերոզ արքայազնի միջանկեալ իշխանութիւնից յետոյ, իր քոյր Ազարմիդուխտը:² Սպանուած Շահնամի քնդերն ապստամբեցին Մծրնում և թագաւոր հրատարակեցին Որմիզդ Ե-ին, Խոսրով Բ-ի թոռներից մէկին, որ այդ միջոցներին (631 և 632 թուականներին) այն կողմերում էր գտնուում: Ազարմիդուխտը գահավեժ եղաւ Ռուստէմի ձեռքով, Խորասանի ժառանգական արքունի զօրաւոր սպարապետի, որի հօրը թագուհին սպանել էր տուել, Այս շփոթութեան ժամանակի մասին եղած շփոթ տեղեկութիւններից չենք կարողանում ստուգապէս որոշել, թէ ղրք այդ ժամանակ թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում թագաւոր կամ թեկնածու եղան և արդեօք ո՞ր ժամանակ և կամ գոնէ ո՞րպիսի յաջորդութեամբ էին այդ թագաւորների և թեկնածուների «կառավարութիւնները»:

Ազարմիդուխտից յետոյ յամնայն գէպս Տիգրանում մի առ ժամանակ թագաւոր է համարուել ոմն Ֆէրրուխզդը (կամ Խորրէզադ) խոսրովի ըստ ոմանց Խոսրով Բ-ի կոտորածից ազատուած միակ որդին, որ հաւանօրէն մի մանուկ էր 5, Պերսիս նահանգում այլ մեծամեծները թագաւորեցրին

* Տես Արարատ 4895 համար 6—12 եւ 1896 համար 1 եւ 2:

1. Սեբէոս Գիրք Դ. գլ. ԽԸ. ԲԱՌՐ. է կոչում այս թագուն, որ խոսրովի աղջիկն էր եւ խոռանմի կամ Շարվարազի կինը:

Ժ. Թ.

2. Սեբէոս ibidem. Եւ կալաւ բամբեշն (Բորան կամ Բորանն) զթագաւորութիւնն ամսն Բ. եւ մեռաւ: Յետ սորա խոսրովն ոմն յազգէ Սասանայ: Եւ յետ սորա ԱԶԱՐՄԻԴՈՒԽԻՍ Գուստր խոսրովայ: Միջանկեալ իշխանի անունը Սեբէոս խոսրով է կոչում, որի մասին ակնարկում է, որ թէեւ Սասանի ցեղիցն էր, սակայն ոչ պայազատ: Ժ. Թ.

5. Սրա դրամներից մեր ձեռքն հասած միակ դրամի վրայ ինքն անմօռու է նկարուած:

մի ուրիշ մանկան, Յազկերտ Գ-ին, Խոսրով Բ-ի թոռան և Շահնամի որդուն, սրան թագաւոր պըսակեցին Արտաշէրի ատրուանում (632 թուականի երկրորդ կիսում կամ 633 թուի առաջին կիսում), Շուտով ընդունուեցաւ նա մայրաքաղաքում ևս, ուր Խոսրովին սպանել էին արդէն, Միւս նահանգների դիմագրութիւնն երևում է տեւական չէ եղել:

Այժմ կարելի էր սարսափելի կերպով խախտուած տէրութեան իսկական վերակազմութեան մասին երազել, Արդ միայնակ թագաւորում էր Խոսրովի թոռներից մէկը, որ հայրասպան Շէրոյից չէր ծագում, նա իւր արքայական օծումն չէից չէր ծագում, նա իւր արքայական օծումն ընդունել էր Ստահրում: Սասանեան հարստութեան հայրենիքում, նրան զօրավիգն էր հօր Ռուստէմը, Ինչպէս երևում է մի իսկական բարգաւաճումն էլ սկսում է, Սակայն ժամանակամիջոցը շատ կարճ էր, Որովհետեւ արդէն տէրութեան գոնեւրը բաղխում էր մի թշնամի, որ աւելի վտանգաւոր պիտի լինէր քան թէ Յուլիանոսն ու Հերակլն էին, Որ եմենն ու տէրութեան մի քանի կալուածները հիւսիս-արեւելեան Արարիայում մոսլեմները խլել էին, հազիւ թէ Տիգրանում ներքին շփոթութիւնների պատճառ նկատած լինէին, Բայց շուտով մոսլեմները մերձեցել էին արդէն, Դու—Բարի ճակատամարտից յետոյ Բէկը—բէգունները երբեմն արքունի երկրներն էին ասպատակել, Մութանան, նրանց յանդգնագոյն առաջնորդներից մին, իսլամական կրօնն ընդունեց, և այսպիսի թիկունք ու նենալուց յետոյ նրա յարձակումներն աւելի յանդուրդեց յետոյ, Արդ հօր Խալիդը, Արարի-գուզըն դարձան, Արդ հօր Խալիդը, Արարի-այում ապստամբութիւններն ընկճելուց յետոյ, դուրս եկաւ (երեկ 633ին) սակաւաձեռն բանակով Եփրատի ներքին ափունքի կողմերը, այս բեգունների ձեռնարկութիւններին առաջնորդելու համար, Պարսից կուսակից արաբներն ու արքունի գնդերը փոքր ճակատամարտերում յաղթուեցան, շուտով սահմանի վրայի քանի մի գոյեակներ արդէն մոսլեմների ձեռքն անցան, և ներքին Եփրատի արեւմտեան կողմերի բնակիչներն, ամենքն էլ քրիստոնեայք, որ Եփրատի և Տիգրիսի կողմերի բոլոր քրիստոնէից պէս քիչ հաւատարմութիւն էին տաժում գէպի պարսից տէրութիւնը, հպատակեցին յաղթողներին և մինչև իսկ պարտաւորութիւն յանձն առան լրտեսութիւն անելու, Արաբացիք

1. Արաբական աշխարհակալութեան նկարագիրն աւելում եմ գլխաւորաբար համայն Բեւաղորդի, որի համառօտ տեղեկութիւններն ոտոյց ջննութիւնից յետոյ աւելի ջննարտանում են քան թէ Տարաբիի եւ Նրան համառօտողների երկարաբան պատմութիւնը: Այս անցքերի ժամանակագրութիւնը սակայն մասամբ կասկածելի է մտնի:

անցել էին արդէն Եփրատի միւս ափն ու կողոպտել տունավաճառի միջոցին Բաղդադը, որ այդ ժամանակ մի գիւղ էր, և այլ աւաններ Տիգրիսի աջ ափին, Բայց Խալիզը շուտով (634-ի ամառուան սկզբին) հրաման ստացաւ Ասորիքի վրայ յարձակուելու, որովհետեւ այդ երկրի տիրապետութիւնն ամիրապետին առ այժմ աւելի կարեւոր էր, նրա յաջորդ, Աբու Օրայիդ Թայֆեցին, թէպէտ իւր հետ սակաւաձեռն զունդ բերաւ, բայց երբ վերջապէս պարսկական կանոնաւոր զօրք եկաւ, մոտ լեմները «կամբջի ճակատամարտում» Եփրատի մօտ բոլորովին ջարդուեցան, չնայելով իրենց դիւցադնական արիւթեան (26 նոյեմ. 634), Գժուարութեամբ միայն կարողացաւ Մուսաննան, զօրավարի ընկնելուց յետոյ, բանակի մնացորդներն ազատել, նոր տիրապետութիւնների մեծագոյն մասն այսպիսով կորաւ, Սակաւի մի զանդաղելուց յետոյ Օմարը (խալիֆ սկսած 23 օգ. 634) վճռեց աւելի մեծ զնգեր ուղարկելու դէպի Իրաք, նա դիմեց արաբների ազահութեան և լարեպաշտութեան միանգամայն, հրաւիրեց իւր ազգին Խոսրովի դանձերն և դրախտի վայելքները ձեռք բերելու, Ահա առաջին անգամ ջարդեցին արաբները մի մեծ պարսկական զօրաբանակ (Բուվայրի մօտ 635-ին կամ 636-ին), Միհրանեան տան շառաւիղ պարսիկ զօրավարն ընկաւ, ճակատամարտում Արաբները կրկին տէր դարձան Եփրատի աջ ափի երկրներին, Մահմետ մարգարէի ամենաառաջին հետեւողներից Աբու Աակկայի որդի Սադ եղաւ արաբների առաջնորդը, սա մի եռանդուն և շրջահայեաց մարդ էր, Տիգրոսի աւազանին այժմ ճանաչեցին տէրութեան սպառնացող վտանգն, Խարմուկի ճակատամարտի (20 օգ. 636), որ Պարսկաստանին յաղթող Հերակլին ամբողջ Ասորիքն էր արժեցել, համբաւն առնելով պարսիկների սարսափն աւելի ևս կը սաստկանար, Արդ Ռուստէմն ինքն անցաւ մի մեծ զօրաբանակի ղեկավար, Ի նշան այս կռուի մեծ լքուութեան, նա առաւ իւր հետ շատ հին համարուող և սուրբ գրօշք տէրութեան (դիրաֆշի կաւիճան), Պարսկական սովորութեամբ նրա բանակի մէջ կային և փղեր, Հէնց պարսիկ առաջաւոր գնդերի հասնելուն պէս Սադը թողեց իւր դիրքն և դարձաւ դէպի յետ կադիսիջայ, որ գտնուում է անապատի եզերքում, (Հիրայից հարաւ կամ հարաւ արեւմուտք), Ամիսներ շարունակ երկու զօրաբանակները միմեանցից որոշ հեռաւորութեան վրայ բանակեցին, Անկասկած արարական զօրքերն աւելի սակաւաթիւ էին, քան թէ պարսկականը, Արաբները չէին կարող այնտեղ մի մեծ զօրագունդ կերակրել, նրանք ստիպուած էին գոհանալ իրենց ասպատակներով, որ անուժ էին դէ-

պի մշակուած երկրներն ու խալիֆայի Մուհամմադ ուղարկած օժանդակութեամբ, Աերջապէս սկսաւ կադիսիջայի (636-ի կամ 637-ի վերջին) մեծ և մի քանի օր տևող ճակատամարտը, Սադը հիւանդ էր, բայց էլի ճակատն ինքն էր կռաւարտում

Պարսիկները մեծ մասով աւելի լաւ էին սպառազինուած քան արաբացիք, որոնց պատերազմական եռանդը սակայն վերջին ծայր բորբոքուած էր, Փղերը սկզբում սարսափեցրին արաբներին ստատիկ կերպով, բայց երբ նրանք դարձեալ արիւթեամբ յառաջ նետուեցան, երևում է, որ փղերն իրենց ընթացքի ուղղութիւնը կորցնելով պատճառ են եղել պարսիկ բանակի շփոթութեան, Պարսիկների մեծագոյն մասն ինչպէս երևում է իւր հին սովորութեամբ վատօրէն է վարուել, բայց արաբների գործն էլ շատ դժուար էր, մինչև թշնամիք յաղթութեան, Ռուստէմն ընկաւ և տէրութեան գրօշք ձեռք ձգեցին,

կադիսիջայի ճակատամարտը գլխաւորաբար վճռեց Տիգրիսի շրջակայքի երկրների վիճակը, Թէպէտ և դեռ տեղի ունեցան քանի մի կռիւներ, մասամբ հին Բաբիլոնի, ընդարձակ սահմաններում, բայց քիչ յետոյ հասան արաբներն արդէն Սելեկիա, առան քաղաքն երկար պաշարումից յետոյ, անցան Տիգրիսի սրընթաց հոսանքի վրայով միւս կողմն և մտան Տիգրոս, Երիտասարդ Յազկերտ թագաւորը նախապէս փախել էր Հոլվան (Բաբիլոնիայի և Մարաստանի սահմանի վրայ), Զաւուլայի մօտ, որ գտնուում է Հոլվանի ճանապարհի վրայ, արաբները կրկին յաղթեցին պարսիկներին, որոնց առաջնորդում էր Ռուստէմի Խոռէզադ 2 եղբայրը, Յազկերտը փախաւ Պարսկաստանի խորքը, Այդ միջոցներին այլ արաբներ միացեալ գետերի բերանի շրջակայ երկրներին տիրել էին և այնտեղից մտել Սուզիանա 5 (Սագաստան), Մի բանիրուն և հաստատուն առաջնորդութիւն եթէ ունեցած լինէին պարսիկները, թերեւ կարողանային իսկական իրանական երկիրն ազատել, Իւր մեծ եռանդի հակառակ զգուշաւոր Օմարն այստեղ վախենում էր, որ արաբները կարող են շատ հեռացած լինել, և չէր կամենում նախ ամենեւին հրաման տալ, որ յառաջ մղուեն դէպի Իրանի բարձրաւանդակը, Աերջապէս տուաւ նա այդ հրամանը, Նեհաւէնդի մօտ, որ

1. Բորսիպ (Borsippa) մերձակայքում, Ժ. Է. Էմմո. Պարսից տէրութեան վախճանին վերաբերեալ Սերէոսի ստուգապատում աւանդածները, Գիրք Գ. Գ. Լ. եր. 168, 169. ԳԸ ԼԵ. եր. 214. 215.
2. Սերէոսը զբաւ կռում է Դոնոսիազատ.
5. Տես այս մասին աշխատանքների վկայութիւնը Սերէոսի գիրք Գ. Գ. Լ. եր. 17 :

Բարեկենդանի գէպի Կէրպատան տանող Հին պողոտայից քիչ դէպի Տարաւ է դառնում մի մեծ պարսիկ զօրարանակ էր ժողովուրդը Եւրոպայի մի մեծ ճակատամարտ տեղի ունեցաւ (640, 641 կամ 642)՝ ուր արաբացիք նախ նոսմանի և ապա նրա ընկնելուց յետոյ՝ Մեկկացի Հուգհայթայի առաջնորդութեամբ փառաւոր յաղթութիւն տարան։ Նեհաւէնդի յաղթութիւնը մոտեմները կոչում են «յաղթութիւն յաղթութեանց»։ Սրանով պարսից տէրութիւնը բոլորովին ջախջախուած էր։ Իրաւ է արաբացիք գեռ շատ պէտք է մաքառէին։ մինչև այդ ընդարձակ միապետութեան բոլոր երկրներին տիրելը՝ բայց զրանք մասնաւոր կռիւներ էին։ որոնց վերջնական ելքը կասկածելի չէր կարող լինել։ որովհետև թշնամիք այլևս մեծ միաբանութիւն չուներին։ Մի քանի քաղաքներ և երկրներ արաբացիք մի քանի անգամ նուաճեցին։ որովհետև կրկին և կրկին ապստամբում էին։ Ամենից խիստ ընդգիծութեան երևում է թէ իսկական Պերսիսում են հանդիպել արաբացիք։ մանաւանդ Ստահրի (Պերսեպոլիս) մերձակայքում։ ուր Սասանեան տէրութիւնը սկիզբն էր առել և ուր կենդանի էր նրա կրօնի։ Մի քանի մեծ և փոքր տեղական իշխաններ խաղաղութեամբ վերջացրին արաբացիների հետ։ Սրանք ամէնքն էլ ներկայացան իրրեւանական իշխաններ։

Յազկերտ թագաւորը սակայն ողբալի կեանք էր վարում։ Իւր կեանքը թագի և տէրութեան համար զոհելու սիրտ չարաւ նա։ Մի կուսակալի մօտից փախչում էր միւսի մօտ։ Ամենից երկար թուում է թէ մնացած պիտի լինի Ստահրումը։ որտեղից և դուրս էր եկել։ Արքայական շքեղութեան արտաքին փառքը թողնում էին։ որ նա վայելէր։ զբոսներ էին կոխում։ նրա անուամբ։ բայց հենց որ ծանրանում էր վրաները։ իսկոյն ճանապարհ էին ձգում։ Աւերջապէս փախաւ նա իւր տէրութեան վերջին հիւսիս—արեւելեան սահմանը։ և այնտեղ Մերվի մօտերը։ թշուառ կերպիւ սղանուեց։ նրա 651-ին կամ 652-ին տեղի ունեցած մահուան հանձմանքները ստոյգ յայտնի չեն։ բայց այսու ամենայնիւ ստոյգ է երևում։ որ Մերվի կուսակալ Մահոյէն խառն է եղել այդ գործում։

Այն հանգամանքները։ որոնց ներքոյ կործանուեցան Աբեմնեան և Սասանեան տէրութիւնները։ ստիպում են մեզ խորհրդածելու զրանց նմանութեան վրայ։ շնայելով որ այդ նմանութիւնը առ երկոյթս դիպածական է։ բայց հիմնուած է ներքին էութեան համաձայնութեան վրայ։

Ինչպէս Գրանիկոսի ճակատամարտը այն անգամին թշնամու փառաւորութիւնը ցոյց տուաւ։ Իսոոսում թագաւորը արեւմտեան գաւառները կոր-

ցրեց։ Գառգամելայի կոիւր տէրութիւնը բաժան բաժան արաւ։ շնայելով որ այդու յաղթողը տէրութեան երկրներին ամենին էլ տէր չեղաւ։ նոյնն եղաւ զրեթէ և 1000 տարուց յետոյ Բուվայրի։ Վաղիսիդայի և Նեհաւէնդի ճակատամարտներից յետոյ։ Եւ ինչպէս փախտական Գարեհը տէրութեան հիւսիս—արեւելքում ոչ թէ թշնամեաց։ այլ դաւաճան մեծամեծների ձեռքով մեռաւ։ այսպէս էլ Յազկերտը։ որ ինչպէս և Գարեհը։ զիւցաղուն չէր։

Պարսիկ աւագանին արարների վերաբերութեամբ այնքան սակաւ հայրենասիրութիւն և այնքան անպարտաճանաչութիւն ցոյց չտուաւ։ որչափ Աղէքսանդրի վերաբերութեամբ։ արդէն կրօնների խիստ և գիտակցական հակադրութիւնը և արարների բիրտ բարքը արգելում էին նրանց հետ միաբանելու։ սակայն այդտեղ էլ չպակասեցան առաջաւոր դաւաճաններ և դասալիքներ թէ բարձր և թէ ցածր ազնուականներից։ Պարսից միապետութեան վերջնական նուաճումն արաբացիներին աւելի ժամանակ նստաւ։ քան թէ մեծ Մակեդոնացուն։ զրա փոխարէն սրանց տիրապետութիւնն էլ աւելի տեւական էր։ հեղինակն անհանգիստութիւնը պարսիկների վրայ միայն արտաբնատ ազդեց։ մինչ արաւական կրօնն և արարական բարքը նրանց մէջ ներս թափանցեց։

Սասանեան տէրութեան մի փոքրիկ հատուած սակայն երկար ժամանակ մնաց։ Պետութեան ժառանգական սպարապետները (սպահպատ։ իսպէհ—րեդ) Խորասանում։ Վարինեան տնից։ քաշուեցան Տաքերիստանի (Մազանդարանի) լեռները և իշխուցին այնտեղ գեռ 100 տարի։ երբեմնապէս ստիպուեցան սակայն խալիֆներին հարկ վճարելու։ Սրանք զրադաշտական կրօնին հաւատարիմ մնացին։ Այն տարեթիւր։ որ նոքա գործ են գնում իրենց զրամների վրայ։ շատ հաւանականութեամբ սղանուում է Յազկերտի մահուան տարուանից։ այսպէս ուրեմն սրանք ըստ երևութիւն իրենց ուղղակի յաջորդ են համարում Սասանեան թագաւորների։

Դ. Զարամանիս։



Մ Ա Ն Կ Ա Վ Ա Բ Ժ Ա Կ Ա Ն .

ԱՐՐԻՍՏՈՆԻ ԱՅՈՍ ՀԱՄԱՐԱՐԱՆԸ .

Տարի և կէս է միայն։ որ Բրիւսէլում հիմնուել է մի ազատ համալսարան և արդէն գրասել է շատերի համակրութիւնը։ Բեղիւյում մինչև այս համալսարանի հիմնուելը կային 4 հին համալսարան։ զրանցից